

**ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 21-րդ դարում.
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ
ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
(մաս երկրորդ)**

Գևորգ Խուդինյան

Հրապարակման մեջ ցույց է տրվում, որ մրցակցային նոր միջավայրում հայազգիտության նպատակները, մեր կամքից անկախ, դարձել են որոշակի գաղափարա-քաղաքական գործառույթների՝ ազգային շահերի պաշտպանության համատեքստում: Խնդիրն այդ գործառույթների (գիտա-ճանաչողական, դիդակտիկ-ուսուցողական, ազգային արժեքների պահպանման ու հարստացման, պաշտպանության ու քարոզչության) իրականացումը գիտականորեն հիմնավորելու և քաղաքականապես ապահովելու մեջ է: Նույն տիրույթում է գտնվում նաև հայազգիտության հանդեպ կիրառվող օտար ռազմավարությունների նկատմամբ դիրքորոշումներ մշակելու և համապատասխան քայլեր ձեռնարկելու առաջադրանքը: Հիմնավորվում է այն գաղափարը, որ ներկայումս արտաքին աշխարհում հայազգիտությանը անհրաժեշտ է որդեգրել այսպես կոչված «հարձակողական պաշտպանություն»: Ներկայացվում է նման մարտավարության ընդհանուր բնութագիրը: Ամփոփելով այդ ամենը, ուրվագծվում է 21-րդ դարում Հայաստանի ու հայությանն անհրաժեշտ, պետականորեն կարգավորվող հայազգիտական համակարգի իդեալական մոդելը, որը հիմնված է լինելու աշխատանքների պլանավորման եռանկյունաձև, և առանձին ոլորտներին կառավարման կենտրոնաձիգ համակարգի օպտիմալ համադրության վրա:

1. Ինչպե՞ս է նպատակը վերածվում գործառույթի

Ինչպես ազգային շահերը՝ հայազգիտության ոլորտում, այնպես էլ՝ հայազգիտությունը՝ ազգային շահերի պաշտպանության բնագավառում, միահյուսվում, բայց չեն նույնանում մեկը մյուսի հետ՝ որպես նպատակների և նրանց իրացման համար անհրաժեշտ գործառույթների համատեղում: Ուստի, նրանց փոխներթափանցման փաստը ստեղծում է ոչ թե միևնույն նպատակների համար աշխատանքների հորիզոնական դաշտ, այլ՝ գործառությային դերաբաշխման լայն հնարավորություններ: Վերջիններս անխուսափելիորեն դրսևորվում են երկու մակարդակի վրա՝ ա. հայազգիտության ավանդական նպատակների հարթություն, այսինքն՝ գիտա-ճանաչողական գործառույթ,

բ. հայագիտության նպատակների իրականացում՝ ազգային շահերի պաշտպանության այն ոլորտներում, որոնք մրցակցային միջավայրում սերտորեն միահյուսվել են հայագիտության հետ:

Մակայն, այդ մակարդակներից յուրաքանչյուրում ազգային շահերը հանդես են գալիս և՛ իրենց ուղղագիծ-քանակական տեսքով, և՛ որպես գիտության միջոցով «ազգ-արժեք» կատեգորիայի մրցունակության մեծացման հնարավորությունների ու տարբերակների ամբողջություն: Մանշանակում է, որ հայագիտության նպատակներն իրենց իրականանալիության հարթություն տեղափոխվելու և դրանով՝ գործառության վերածվելու գործընթացում ճյուղավորվում և միաժամանակ՝ միահյուսվում են ազգային շահերի պաշտպանության այլ ոլորտներից բխող որոշակի քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ խնդիրների հետ: Ցայսօր, հայագիտության նպատակները գործառույթի վերածվելու գործընթացները մեզանում փաստորեն տեղի են ունեցել ինքնաբերաբար՝ տարերային ձևով, քանի որ կոնկրետ ոլորտներում հայագիտության գործառության դերակատարության գիտակցված պահանջմունքը ընդունել է խիստ աղուտ գաղափարների տեսք՝ առանց որոշակիացման և, միաժամանակ նաև՝ ամբողջացման: Պատճառը ինչպես գիտության ու քաղաքականության կապի գաղափարախոսական հիմնավորման, այնպես էլ փոխգործակցության հստակ մեխանիզմների բացակայությունն է եղել: Բացակայել է գիտելիքի բուն էության խորքային ընկալումը, որից բխում է նրա՝ որպես երկսայրի սրի օգտագործման-չեզոքացման մեխանիզմների անհրաժեշտությունը: Մինչդեռ, ուսումնասիրության այն ոլորտները, որոնք մտնում են հայագիտության, այսինքն՝ կոնկրետ գիտությունների հանրագումարի մեջ, հստակորեն տարանջատվում են գիտության այն բնագավառներից, որտեղ մարդը հանդես է գալիս բնության հետ հարաբերությունների հարթության վրա: Հայագիտության մեջ մարդը, հստակորեն, որոշակի ազգի՝ հայ ազգի ներկայացուցիչ է և, որպես այդպիսին, ո՛չ թե բնության, այլ՝ ինքն իր նմանների և այլ ազգերի հետ հարաբերվող սուբյեկտ և միաժամանակ նաև՝ այլ ազգերից բխող նպատակների իրացման պոտենցիալ օբյեկտ է: Ըստ այդմ, այդ սուբյեկտը ճանաչում է ինքն իրեն որպես պատմություն, լեզու, մշակույթ և այլն, ու, միաժամանակ, ճանաչողության արդյունքները օգտագործում է

ա. որպես գիտելիք, որն ունի ինքնահարստացման ու ինքնակատարելագործման հատկություն,

բ. որպես գիտելիք, որն այդ ինքնահարստացման ու ինքնակատարելագործման ժամանակային սուբյեկտներին՝ սերունդներին փոխանցվելու կարիք է զգում,

գ. որպես գիտելիք, որը հանդես է գալիս որպես իր ուսումնասիրության առանձին ոլորտ-օբյեկտների՝ արվեստի, գրականության և ընդհանրապես՝ ողջ մշակույթի պահպանման և անկաշկանդ զարգացման գործիք,

դ. որպես «գիտելիք իր մասին», որը հարաբերվում է իր մասին՝ այլոց կողմից ստեղծվող գիտելիքների ու պատկերացումների հետ՝ փոխհարստացման, իսկ հաճախ նաև՝ փոխբացասման նպատակով:

Այս բոլոր չորս բնագավառներում հայագիտության միջոցով ձեռք բերվող գիտական գիտելիքները հանդես են գալիս և՛ որպես ճանաչողության և՛ միաժամանակ՝ իրենց ուսումնասիրության օբյեկտը դարձած ոլորտների կատարելագործման միջոց, այսինքն՝ ձեռք են բերում և՛ գիտական, և՛ կիրառական նշանակություն: Առաջին նշանակությունը բնորոշ է միայն առաջին (ա) հարթությանը՝ ճանաչողությանը, մյուսները՝ բոլոր չորս հարթություններին: Սա նշանակում է, որ ներկայումս հայագիտությունը ձեռք է բերել միաժամանակ չորս գործառույթներ, որոնցից առաջինի իրականացման գործընթացում նա հանդես է գալիս որպես անընդհատ կուտակվող, հարստացվող ու կատարելագործվող «գիտելիք իր համար», իսկ մնացած հարթությունների վրա՝ որպես իր ուսումնասիրության օբյեկտների ձևավորման, պահպանման, կատարելագործման ու միջավայրին հարմարվելու (ադապտացվելու) յուրօրինակ փորձարան (լաբորատորիա), այսինքն՝ ազգային շահերի իրացման գործիք:

Հայագիտության նպատակները ազգային շահերի իրացման դաշտ տեղափոխելու վճռորոշ պայմանը այդ նպատակների գործառութային-կիրառական նշանակությունը գիտակցող ու իմաստավորող և, միաժամանակ, դրանք ազգային շահերի՝ այսինքն՝ գիտակցված պահանջմունքների պրիզմայով դիտարկող պետության առկայությունն է: Առանց պետության՝ հնարավոր չէ գիտությունը, այդ թվում և հայագիտությունը դարձնել գիտականորեն հիմնավորված քաղաքականության բաղկացուցիչ՝ այն ոլորտների համար, որոնց ճանաչողությունն անընդհատ զգում է պետության միջոցով միջնորդավորվող՝ հետադարձ կապի կարիքը: Սա նշանակում է, որ պետության առկայությունը պարտադիր պայման է որևէ ոլորտին վերաբերվող գիտական գիտելիքից ռացիոնալ լուծումներ գտնելու և այդ լուծումները քաղաքական որոշումների ու կազմակերպական քայլերի տեսքով՝ նույն ոլորտին վերադարձնելով, այն կատարելա-

գործելու համար: Պատճառն ակնհայտ է. հայագիտության մեջ ուսումնասիրության սուբյեկտը և օբյեկտը գտնվում են տարբեր հարթությունների վրա, ուստի, արվեստագիտությունը չի կարող ուղղակիորեն «խաղի կանոններ» թելադրել, դիցուկ՝ արվեստին չվնասելով նրան, կամ օրինակ՝ պատմագրությունը՝ արտաքին քարոզչությանը, առանց հաշվի առնելու վերջինիս ծավալման միջավայրի ու պայմանների յուրահատկությունները: Նույնն է նաև գիտություն-կրթություն կապի ու փոխադասարարականության մեխանիզմը, ուր գիտական գիտելիքը հայեցի դաստիարակության լուրջ բաղադրիչ է, սակայն եթե չի դառնում պետական քաղաքականության զենք, ապա նրա ճանաչողական նշանակությունը կտրվում է ժամանակի ու տարածության իրական չափորոշիչներից (ռեալ պարամետրերից) ու վերածվում հարաբերականորեն «մեռյալ գիտելիքի»:

Սա նշանակում է, որ ազգային շահերի պաշտպանության համատեքստում հայագիտության գործառնությանը դերակատարության պարտադիր պայմանը նվազագույնը երեք սուբյեկտների փոխգործակցությունն է: Դրանք են.

ա. գիտական ուսումնասիրության՝ ճանաչողության սուբյեկտը և նրա կողմից ձեռք բերված կոնկրետ գիտելիքը՝ որպես կիրառական արժեք,

բ. գիտական ուսումնասիրության օբյեկտը կամ ոլորտը և նրա զարգացման, կատարելագործման ճանապարհին առկա գիտականորեն լուծվող խնդիրը,

գ. ազգային շահերը որպես իր գիտակցված պահանջմունքների հանրագումար ընկալող պետությունը, որը գիտական գիտելիքը վերածում է քաղաքական որոշման՝ այն դարձնելով կոնկրետ ոլորտի զարգացման միջոց:

Այսպիսով, ազգային շահերի պաշտպանության համատեքստում հայագիտության գործառնությունը հանդես են գալիս որպես ճանաչողությունից բխող գիտելիքի և քաղաքականության կոնկրետ ոլորտից բխող առաջադրանքի «պետական ժամադրության» հիմքի վրա՝ դերաբաշխումների հարատև (պերմանենտ) վերակերպավորման հարաշարժ (դինամիկ) գործընթացի կոնկրետ արտահայտություններ: Վերջինիս մեխանիզմը¹ թույլ է տալիս հեշտությամբ հաղթահարել նաև գիտական գիտելիքների երկսայրի սուր լինելու ակնհայտ փաստը: Այսպիսով, հայագի-

¹ Այդ մեխանիզմը, որպես հայագիտական համակարգի մոդել, մենք կներկայացնենք ուսումնասիրության վերջին ենթակետում:

տության գործառնությանը դերակատարության դաշտում գիտությունը, կրթությունը, մշակույթը և արտաքին քաղաքականության հումանիտար-հայագիտական կողմերը (ասպեկտները) փոխադարձաբար լրացնում ու հարստացնում են իրար՝ որպես գիտականորեն հիմնավորվող ու պետականորեն կարգավորվող քաղաքականության ուղղակի և միջնորդավորված կապի եռանդամ բանաձևի բաղկացուցիչ տարրեր: Հենց այդ բանաձևի միջոցով՝ հայագիտության նպատակները վերաժվում են գործառնությունների՝ ազգային շահերի պաշտպանության համատեքստում:

2. Հայագիտության ներկա վիճակի ընդհանուր բնութագիրը

Ներկայումս հայագիտությունը մի կերպ գոյատևում է՝ իր համար, պետությունը՝ իր, իսկ կրթության ու մշակույթի զարգացման պետական կարգավորումը իրականացվում է խորհրդային ավանդույթի և դրամաշնորհներով ֆինանսավորվող օտարամուտ նորամուծությունների մեկտեղման միջոցով: Հայագիտության հանդեպ հետևողականորեն գործադրվող օտար ռազմավարությունների դեմ պայքարը միայն առանձին գիտնականների անկազմակերպ և ոչ միշտ արդյունավետ ջանքերից է կախված: Արտաքին աշխարհում Հայաստանի քաղաքակրթական դեմքի ձևավորման առաջադրանքը ընդհանրապես անուշադրության է մատնված:

Հայագիտության ներկա վիճակը բնութագրող հիմնական արժեչափերը վաղուց հայտնի են ամենքին: Դրանց ամենաբնորոշ գծերն են.

ա. հայագիտական օջախների փաստացի կոնսերվացումը ՀՀ-ում՝ ֆինանսավորման բացակայության պատճառով,

բ. երկու սերունդների խզվածքի առաջացումը՝ առաջինի ֆիզիկական ծերացման, իսկ երկրորդի՝ հայագիտությամբ զբաղվելու փաստացի հնարավորությունների բացակայության պատճառով,

գ. կրթական համակարգի առևտրականացումը՝ ի հաշիվ նրա բովանդակության. ազգային ավանդույթն ընկալվում է իբրև հետամնացություն, իսկ օտար նորամուծությունները՝ տգեղ, բայց «անհրաժեշտ» նորաձևություն,

դ. էլիտար մշակույթի քայքայումը և գավառական-ասիական ավանդույթների «վերաթարմացումը»՝ ժողովրդական մշակույթի անվան տակ,

ե. հայագիտության հանդեպ կիրառվող օտար ռազմավարությունների (ստրատեգիաների) լայն ծավալումը Մփյուռքի հայագիտական օջախներում և դրանց թափանցումը ՀՀ,

զ. հայագիտության դերի ու նշանակության անտեսումը՝ ազգային շահերի հետապնդման հարթության վրա:

Այս հիմնական և բազմաթիվ այլ արժեչափեր բնութագրում են իրերի *առկա վիճակը*, որն այլ կերպ հնարավոր չէ բնութագրել քան համակարգված քաղաքականության բացակայության պայմաններում իրականացվող «գիտական ինքնագործունեություն» ոչ թե ի խնդիր հայագիտության հարաբերական ազատության, այլ որպես հետևանք՝ հայագիտության փաստացի անտերություն:

Նման վիճակի շարունակումը որպես հայագիտության կողմից իրականությանը հարմարվելու *անխուսափելիություն*, տանում է գլոբալացող աշխարհում ՀՀ-ի ու հայության քաղաքակրթական դեմքի աստիճանական բայց, հետևողական կորստյանը՝ գիտության, կրթության, մշակույթի հիմքերի քայքայման ճանապարհով: Նման հեռանկարի գիտակցումը և պետական քաղաքականություն մշակելու փորձերը առայժմ գտնվում են տվյալ քայքայվող համակարգի շարունակական «օպտիմալացման» խնդրի տիրույթում, որը նույն առևտրականացումն է, բայց այս անգամ, վերևից՝ պետության կողմից: Այսինքն՝ ամեն ինչ հանգում է երևույթի ձևական-քանակական ընկալմանը՝ միայն մի տարբերությամբ. եթե տնտեսության օպտիմալացումը չափվում է տոննաներով ու խորանարդ-մետրերով կրճատելու միջոցով, ապա գիտության, կրթության կամ մշակույթի օպտիմալացումը՝ երևութական (ֆիկտիվ) գիտաշխատողների, դասաժամի ընթացքում երեխային գրեթե ոչինչ չտվող ուսուցիչների կամ անհասկանալի գործառույթ կատարող մշակույթի օջախների թվով: Բնական է, որ սրանից ոչինչ չի փոխվում և չի էլ կարող փոխվել, ուստի ամեն «բարեփոխում» կա՛մ կես ճանապարհին կանգ է առնում, կա՛մ էլ հանգեցնում է հակառակ արդյունքների՝ վիճակի է՛լ ավելի վատթարացմանը: Պատճառն ակնհայտ է. օպտիմալացումը ո՛չ թե ձևի, այլ՝ բովանդակությա՛ն փոփոխության խնդիր է, որին պետք է վերջում հարմարվի ձևը՝ կաղապարը: Ուստի, քանի դեռ չի հստակեցվել բովանդակությունը, ձևին ձեռք տալու ամեն փորձ բացում է փլուզման ճանապարհը: Իսկ բովանդակության փոփոխությունն անհնար է առանց ազգային շահերի համատեքստում հայագիտության գործառութային դերակատարության հստակեցման՝ որպես գիտության, կրթության, մշակույթի պահպանման և զարգացման սեփական՝ հայկական հայեցակարգից բխող ընթացիկ ու հեռանկարային լուծումների համակարգ: Ուստի, ներկայումս հայագիտության ոլորտում առկա իդեալի և իրականության հակաթեզը կարելի է հաղթահարել միայն այն պարագայում, եթե՝

ա. իդեալը ընկալվի որպես այդպիսին, այսինքն՝ որպես գլոբալացող աշխարհում հայագիտության գործառության դերակատարության ընդլայնում՝ գիտությունից դեպի ազգային շահերի ապահովման ողջ հոգևոր բնագավառը,

բ. իրականությունն ընկալվի որպես այդպիսին, այսինքն՝ որպես գիտակցված պահանջմունքների բացակայությունից բխող տարերային ու չհամակարգված հարմարեցում՝ նոր միջավայրին ու նոր ժամանակներին,

գ. իրականությունը իդեալին մոտեցնելու գործընթացը չվերածվի ձևական-բյուրոկրատական «օպտիմալ հաշվարկների» կիրարկման ու ձախողման,

դ. հստակեցվեն իդեալական մոդելի կիրարկման հիմքային (բազային) արժեչափերը, այն է՝ հայագիտության գիտա-ճանաչողական, դիդակտիկ-ուսուցողական, ազգային արժեքների պահպանման ու զարգացման, ինչպես նաև՝ պաշտպանության ու քարոզչության գործառույթները,

ե. հստակեցվեն այդ գործառույթների իրականացման կառուցվածքային, տեղեկատվական և գաղափարախոսական ապահովման մեխանիզմները,

զ. վերջիններիս օգնությամբ սկսվի հայագիտությունը իր գործառույթների ոլորտը տեղափոխելու գործընթացը՝ պետական պատվերի միջոցով ընդլայնելով վերջիններիս իրականացման դաշտը և աստիճանաբար կրճատելով, նեղացնելով ու սահմանափակելով ինքնագործունեության, օտար թափանցումների և պետության բյուրոկրատական միջամտության խողովակները:

Դրա համար ներկայումս անհրաժեշտ են.

ա. հայագիտության գործառույթներից յուրաքանչյուրի բովանդակության և նրանց փոխադարձ կապի ընդհանուր պատկերը,

բ. հայագիտության առջև կանգնած առաջնահերթ խնդիրների սահմանումը՝ իր գործառույթներից յուրաքանչյուրի իրականացման տիրույթում,

գ. հայագիտության նկատմամբ կիրարկվող օտար ռազմավարությունների համեմատական բնութագիրը և, ելնելով դրանից, ամենաօպտիմալ մարտավարության մշակումը,

դ. հայագիտական համակարգի իդեալական մոդելի ձևավորումը և հայագիտության աստիճանական տեղափոխումը՝ նրա գործառության դերակատարության դաշտից ներս:

3. Հայագիտության գիտա-ճանաչողական գործառույթը

Ազգային շահերի, այսինքն՝ պետության գիտակցված պահանջմունքների ապահովման տիրույթում հայագիտությունը իրականացնում է, նախ և առաջ, *գիտա-ճանաչողական գործառույթ*: Սա նշանակում է, որ ճանաչողության միջոցով հայագիտությունը «արտադրում է» հիմնարար գիտելիքներ մեր ինքնության կարևորագույն բաղադրիչների՝ պատմության, լեզվի, մշակույթի և այլ ոլորտների վերաբերյալ, որոնց հարստացման գործընթացը վերջին հաշվով ուղիղ համեմատական է ազգային ինքնագիտակցության աճի գործընթացին: Այդ գիտելիքները ներառնում են փոխադարձաբար միմյանց հետ կապված՝ *հիմնարար* և *կիրառական* շերտեր: Առաջինը կազմում է «գիտությունն իր համար» կամ մաքուր ճանաչողությունը, իսկ երկրորդը՝ ճանաչողության այն շերտը, որը հարաբերվում է տվյալ պահին պետության և ազգի ինքնաճանաչողության կոնկրետ մակարդակից բխող առաջադրանքների հետ: Օրինակ պատմագրությունը անընդհատ ուսումնասիրում է հայոց պատմության հիմնարար խնդիրները, բայց միաժամանակ, պատմական որոշակի դարաշրջանում առանձնացնում է դրանցից այնպիսիները, որոնք համապատասխանում են պետության և ազգի օրվան պահանջմունքներից և գաղափարախոսական ընկալումներից բխող խնդիրներին: Նախկինում դա դասակարգային պայքարի կամ հեղափոխական շարժումների, ներկայումս՝ Հայոց ցեղասպանության, ազգային-ազատագրական շարժման պատմությունն է, վաղը կարող են առաջ գալ այլ հրատապ թեմաներ: Սակայն, ճանաչողությանն անհրաժեշտ գիտելիքների այս երկու շերտերը միշտ կմնան, քանի որ առանց առաջինի չկա գիտություն, ուրեմն՝ անիմաստ է խոսել նրա կիրառական նշանակության մասին:

Այսպիսով, հայագիտության գիտա-ճանաչողական գործառույթն հիմնարար գիտելիքների խորացման միջոցով՝ հիմնարար ու հիմնարար-կիրառական գիտելիքների փոխհարաբերակցության օպտիմալ տարբերակի շարունակական փնտրտուքն է՝ որպես գիտության զարգացման ընթացիկ ու հեռանկարային խնդիրների համադրություն:

Որպես հիմնարար գիտելիքների արտադրության «մեքենա»՝ հայագիտությունը գործում է «ավտոմատ ռեժիմով», իսկ որպես հիմնարար-կիրառական գիտելիքների ապահովման «մեքենա»՝ նա հարաբերվում է կրթության, մշակույթի, արտաքին աշխարհի, այսինքն՝ այլ «մեքենաների» հետ, որոնք զբաղվում են ողջ աշխարհին և անգամ՝ նույն հայ ժողովրդին մատուցվող, բայց այլ բովանդակության գիտելիքների տարածումով: Նման պայմաններում, հայագիտության գիտա-ճանաչողական

գործառույթի իրականացումը պահանջում է հաշվի առնել այն փաստը, որ հիմնարար գիտելիքների «արտադրության» ոլորտում խորհրդային ժամանակաշրջանից Հայաստանի ձեռք բերած բարձր մակարդակը չի համապատասխանում հիմնարար-կիրառական գիտելիքների «արտադրության» մակարդակին, նաև այն, որ հայագիտական այլ «մեքենաների» արտադրանքը թափանցում է ՀՀ-ի կրթության, մշակույթի ոլորտներ և միջազգային գիտական շրջանակներ: Ելնելով դրանից, ներկա հանգրվանում անհրաժեշտություն է զգացվում հայագետների ուժերը կենտրոնացնել կիրառական նշանակություն ունեցող հիմնարար գիտելիքների արտադրության վրա: Մակայն, որքան էլ կիրառական լինի տվյալ գիտելիքը, այն պետք է կրի հիմնարար բնույթ, այսինքն՝ պարունակի հայոց պատմությանը, մշակույթին կամ լեզվին առնչվող կիրառական խնդրի ճշգրիտ և խորը գնահատականը՝ առանց քաղաքական նպատակահարմարությունից բխող որևէ «զարդանախշի»: Իսկ գիտական գիտելիքի կիրառական նշանակության հստակեցումը պատկանում է ո՛չ թե գիտության, այլ՝ գիտական քաղաքականության ոլորտին, այսինքն՝ հայագիտական համակարգին:

Հիմնարար-կիրառական նշանակություն ունեցող թեմաների ընդհանուր ցանկը պետք է անընդհատ հարստացվի, բայց միաժամանակ նաև՝ ֆինանսավորվի առաջնահերթ կերպով: Նման ցանկի ճշտումը հնարավոր է միայն հայագիտական համակարգի միջոցով, որը պետք է ապահովված լինի անհրաժեշտ տեղեկատվական-վերլուծական ենթակառուցվածքով՝ կրթության առաջնահերթությունների, մշակույթի զարգացման միտումների և, մանավանդ, հայագիտության ոլորտում կիրառվող օտար ռազմավարությունների խոր իմացությամբ: Նման համակարգի գործառույթների մեջ պետք է մտնի նաև գիտական արտադրանքի օպտիմալ կիրառման ձևերի ընտրության հարցը: Այն է

ա. Ի՞նչը, որտե՞ղ և ինչպե՞ս հրատարակելու խնդրի լուծումը,

բ. ստացված գիտելիքներից բխող քաղաքականության մշակումը՝ սեփական թերությունների ու խոցելի կողմերի հաղթահարման համար,

գ. այդ քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ գիտական դեղատոմսերի մշակման պատվերի իջեցումը, ստացումը և կիրարկումը:

Մրանով, հայագիտական համակարգի առաջին, բայց ամենակարևոր «անիվը» կսկսի «պտտվել» ընդհանուր մեքենային անհրաժեշտ արագությամբ, սակայն, միաժամանակ, բացարձակապես չի շեղվի հիմնարար գիտելիքներ արտադրելու իր բուն խնդրից, այսինքն՝ կզբաղվի միայն ու

միայն գիտությամբ՝ ճշմարտության որոնումով, առանց դույզն ինչ մտահոգվելու գիտական գիտելիքի երկսայրի սուր լինելու փաստի մասին, քանզի հայագիտության գործառույթների տվյալ համակարգի մեջ՝ նման մտահոգությունը ամեննին էլ նրա գործը չէ:

4. Հայագիտության դիդակտիկ-ուսուցողական գործառույթը

Հայագիտական առարկաների դասավանդման և ընդհանրապես՝ ազգի ստեղծած նյութական ու հոգևոր արժեքների մասին գիտելիքների մշտական հարստացման ու կատարելագործման խնդիրը ներկայումս դադարել է լինել սոսկ դպրոցական, բուհական և այլ ծրագրերի բաղկացուցիչը. նա ձեռք է բերել գաղափարա-քաղաքական գործառույթի դեր ու նշանակություն՝ ազգային շահերի պաշտպանության համատեքստում: Պատճառն ակնհայտ է. եթե գլոբալացող աշխարհում հայ մարդը իր գիտակից կյանքի սկզբնավորման պահից սկսած մինչև մահը հարատև կապ չպահպանի սեփական պատմության, լեզվի, մշակույթի և ինքնության այլ բաղադրիչների հետ՝ սովորելու և սովորեցնելու անընդհատ գործընթացի միջոցով, ապա նա արագորեն կարող է կորցնել իր կամ իր սերունդների հայկական դիմագիծը: Տեղեկատվության (ինֆորմացիայի) այն հեղեղը, որը հայ մարդն ստանում ու ընկալում է ամեն օր՝ կարող է շատ արագորեն քշել-տանել ազգային ինքնության բոլոր բաղադրատարրերը՝ թողնելով միայն չնչին պատառիկներ՝ ընտանեկան հիշողության և առանձին կցկտուր փաստերի տեսքով: Սա վերաբերում է, մանավանդ, ՀՀ-ից դուրս բնակվող հայությանը, որին մի կողմից ներկայումս ընձեռնվել է հայկական ինքնության բաղադրատարրերի հետ նման կապի հնարավորություն՝ տեղեկատվության փոխանցման ժամանակակից միջոցների շնորհիվ, բայց մյուս կողմից՝ արագացել և աղետալի չափերի է հասել հայության ձուլման գործընթացը:

Ստացվում է, որ հայագիտական առարկաների ուսուցման ու գիտելիքների հարստացման գործընթացի անընդհատության և հարատևության ապահովման խնդիրը դուրս է եկել դպրոցական և անգամ՝ բուհական ծրագրերի շրջանակներից՝ ձեռք բերելով հայագիտության գաղափարա-քաղաքական գործառույթի դեր ու նշանակություն՝ ազգային շահերի պաշտպանության համատեքստում: Նման պայմաններում, հայոց նյութական ու հոգևոր արժեքների բովանդակության ուսուցման խնդիրը պետք է համապատասխանեցվի գլոբալացող աշխարհի նոր արժեչափերին, այսինքն՝ ժամանակի ընդլայնման, տարածության կրճատման իրողություններին, որոնց միաժամանակյա ներգործության արդյունքում

միավոր ժամանակամիջոցում շփումների (կոնտակտների) շատ ավելի մեծ «խտության» մեջ հայտնվող մարդկանց՝ սեփական ինքնության համար մաքառող խմբերը «... անգամ ապահովելով այդ ինքնությունն ու առանձինությունը՝ նրանք ստիպված էին լինում ենթարկվել իրենց միջից իրենց տիպին պատկանող, սակայն ավելի ուժեղ միավորին» [1]: Սա «մշակութային ինքնությունների» մշտական պայքար է, ուր գործում է «հարատև կովի» գաղափարը. նրանում հաղթում է առողջ և մշտանորոգ ազգային պահպանողականությունը, որը մի կողմից՝ ներկայումս ծավալվող մրցակցության գործընթացն ընկալում է որպես սեփական ինքնության պահպանման տեխնոլոգիական բաղադրիչների ամրապնդում (հեռուստատեսություն, ինտերնետ և այլն), մյուս կողմից՝ իր տեսակին բնորոշ հատկանիշների մշտական կատարելագործում ու հարստացում՝ ապահովելու համար նրանց գերակայությունը իր միջավայրի այլ տեսակներից բխող նմանատիպ հատկանիշների հանդեպ: Դա վերաբերվում է ոչ միայն սեփական պատմության, լեզվի կամ մշակույթի իմացության մակարդակի մշտական կատարելագործմանը, այլև՝ սովորույթների, բարքերի, կենցաղի այն գծերի ընկալմանն ու պահպանմանը, որոնք ձևավորում են ազգային դիմագիծը:

Հայագիտության դիդակտիկ-ուսուցողական գործառույթի նման լայն մեկնաբանությունը ենթադրում է սկզբունքորեն նոր մոտեցումների մշակում նաև հայագիտական առարկաների դասավանդման գործի հանդեպ, որը ներկայումս գտնվում է այն նույն և անգամ՝ ավելի վատ վիճակում, ինչպիսին էր տեր-թողիկյան դպրոցը՝ 19-րդ լուսավորյալ դարի պայմաններում: Հայագիտական առարկաների ուսուցումը նորից Տեր-Թողիկի գրաբարյան աղոթքներն է հիշեցնում, իսկ ահա համամարդկային արժեքների վերաբերյալ գիտելիքների չափաբաժնի ավելացումը տեղի է ունենում ոչ թե ազգայինի հետ համադրության միջոցով, այլ՝ ի հաշիվ նրա: Վտանգավոր է ինչպես կրթության հայկական բովանդակությունը քարացածության հոմանիշի վերածելու ներկա միտումը, այնպես էլ համամարդկային արժեքների ընկալումը՝ սեփականի հետ համեմատության, բաղդատման ու փոխհարստացման դաշտից մեկուսի: Սա նշանակում է, որ հայագիտության դիդակտիկ-ուսուցողական գործառույթի իրականացումը ներկայումս պահանջում է.

ա. ուսուցման ձևերի, եղանակների տեխնիկական միջոցների ու հնարավորությունների անընդհատ կատարելագործում,

բ. ուսուցման բովանդակության անաղարտության խստագույն պահպանում՝ նրա հարատև հարստացման հիմքի վրա:

Այս երկու խնդիրների լուծման մեջ հայագիտությունը, որպես ճանաչողության ոլորտ, ունի իր կարևոր գործառնության դերակատարությունը և՛ Հայաստանում, և՛ Սփյուռքում, քանզի միավոր ժամանակամիջոցում ազգային ինքնությունը կորցնող ու ձուլվող մեր յուրաքանչյուր հայրենակցի կորուստը, հեռանկարային առումով, շատ ավելի մեծ է, քան այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են նրա հայկական դիմագծի պահպանման համար: Դրա համար առայժմ անհրաժեշտ է սկսել նվազագույնից, այն է՝

ա. հիմնարար նշանակություն ունեցող այն թեմաների ուսումնասիրությունը, որոնք կիրառական արժեք ունեն հայագիտության առավել խոր և ժամանակակից չափանիշներով ուսուցման համար անհրաժեշտ նոր առարկաների ստեղծման տեսանկյունից. դրանցից թվարկենք մի քանիսը՝ հայ մշակույթի պատմություն, հայոց պետականության պատմություն, արդի հայ մշակույթ և այլն:

բ. ձևավորել հայագիտության ինտերնետային դպրոց՝ համապատասխան «դասարաններով», որոնք հիմնված կլինեն ո՛չ թե պայմանական աշակերտի տարիքի, այլ՝ հայագիտական առարկաների վերաբերյալ գիտելիքների համապատասխան պաշարի հաշվառման վրա, սկսելով ռուսախոս ու անգլիախոս մեր հայրենակիցների համար հայոց լեզվի դասավանդումից:

գ. ինտերնետով ու հեռուստատեսությամբ կազմակերպել ՀՀ-ում և Սփյուռքում տեղի ունեցող յուրաքանչյուր շատ թե քիչ նշանակալի մշակութային միջոցառման (ցուցահանդես, համերգ և այլն) հնարավորինս ամբողջական ներկայացումը:

դ. սկսել «Հայաստանն ու հայությունը 21-րդ դարում» հատուկ դասընթացի մշակումը՝ Հայաստանի ու Սփյուռքի բոլոր կրթօջախների համար, որի միջոցով ներկայումս կյանք մտնող հայ երեխային կտրվեն մանրամասն գիտելիքներ իր հայրենիքի և հայկական բոլոր համայնքների արդի վիճակի, կրթական մշակութային, գիտական, տնտեսական, մարզական և այլն հնարավորությունների, և դրանցից օգտվելու համար կապի մեջ մտնելու տարբերակների (ֆաքս, հեռախոս, ինտերնետ և այլն) մասին, որը կարող է հիքավի «շղթայական ռեակցիա» առաջացնել՝ եռանդով լցված մատաղ սերնդի միջանձնական հարաբերությունների ընդլայնման առումով՝ նրա ներկայացուցիչներին դարձնելով միասնական, համամոլորակային հայկական քաղաքակրթական տարածքի գործուն սուբյեկտ:

5. Հայագիտությունը և ազգային արժեքների պահպանման ու հարստացման խնդիրը

Հայագիտությունը ո՛չ միայն ուսումնասիրում և իր ճանաչողության արդյունքները մատուցելով մեր հանրությանը՝ նրան «բացատրում է» իր ով լինելը, այլև՝ գիտականորեն ապահովում է իր ուսումնասիրության օբյեկտը հանդիսացող արժեքների պահպանման ու զարգացման ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը: Սա այն ոլորտն է, ուր գիտական դեդատումսի բացակայությունը կարող է կործանարար լինել, մանավանդ՝ մշակույթի զարգացման արդի միտումների համատեքստում:

Ի վերջո դժվար չէ սահմանել թե ո՞րն է ազգային արժեքը՝ պատմական անցյալից բխող ձեռքբերումների համատեքստում (ճարտարապետություն, նկարչություն, երաժշտություն, գրականություն և այլն), բայց շատ բարդ գործ է այն հարցի հստակեցումը, թե ներկայումս ստեղծվող մեր գրականությունը, երաժշտությունը, նկարչությունը կամ ճարտարապետությունը որքանո՞վ են կարողանում ապահովել հայկական քաղաքակրթության ժառանգման գործընթացի հարատևությունը: Պատճառն ակնհայտ է. այստեղ չի կարող լինել արտաքին ձևերի ու արտահայտչամիջոցների պարզ կրկնություն: Անխուսափելի է ստեղծագործողի լայն ազատությունը և նրա համադրական աշխարհընկալումից բխող՝ ազգային ու համամարդկային նոր սինթեզի ձևավորումը: Դրա հետ կապված՝ անխուսափելի է դառնում նաև այն միջավայրի դրական կամ բացասական ազդեցությունը, որտեղ իրականացվում է այդ դժվարին գործը: Ընդհանրապես հայագիտությունը, և մանավանդ, նրա մեջ մտնող այն գիտությունները, որոնք կապված են հայկական մշակույթի ուսումնասիրության հետ, այդ առումով ներկայումս դիմագրավում են մի կողմից՝ հայկական էլիտար մշակույթի ճգնաժամով և մյուս կողմից՝ զանգվածային մշակույթի աննախադեպ գրոհով պայմանավորվող լուրջ տագնապ: Դրանց գումարվում է նաև տվյալ ոլորտը տնօրինող պետական պաշտոնեության մակերեսային ու ցածր գիտելիքներ ունենալու՝ բավականին լայն տարածում գտած երևույթը: Այսօր ստեղծվել է մի կացություն, որ եթե չձևավորվի մշակույթի ոլորտն ուսումնասիրող գիտությունների և այդ ոլորտում իրականացվող քաղաքականության կենդանի ու անընդհատ կապը, ապա մենք շուտով կարող ենք կորցնել ազգային արժեքների պահպանման և նրանց զարգացման խնդիրների միջև առկա ներքին կապն ու փոխադասանավորվածությունը: Այսինքն՝ արժեքների

պահպանման խնդիրը կվերածվի զուտ թանգարանային-ցուցադրական գործունեության, իսկ արժեքների զարգացման ու հարստացման գործընթացը դուրս կգա գիտական ճանաչողության և ուսուցման դաշտից: Արդյունքում կարող է առաջանալ երկու Հայաստան՝ այն ինչը, որ մենք գիտենք և այն ինչը, որ մենք տեսնում ենք՝ մեր աչքով: Ուրեմն, առանց հայագիտության կոնկրետ ոլորտներից բխող գիտելիքների, դժվար է պատկերացնել հայկականության արժեհամակարգի փոխանցումը և, միաժամանակ նաև՝ նրա շարունակական վերաթարմացումը: Սակայն, առանց հայագիտության ազգային շահերի պաշտպանության ոլորտում ունեցած առաջին՝ գիտա-ճանաչողական և երկրորդ՝ դիդակտիկ-ուսուցողական գործառնությունների իրականացման, հնարավոր չէ պատկերացնել նաև ազգային արժեքների պահպանումը, առավել ևս՝ զարգացումը:

Սա նշանակում է, որ հայագիտությունը իր ճանաչողության արդյունքները որպես գիտական գիտելիքներ պետք է մատուցի ո՛չ միայն հուշարձանների պահպանությամբ զբաղվող մարմիններին կամ թանգարանների լայն ցանցին, այլև՝ այն բոլոր կրթական հաստատություններին, ուր սովորում են մեր ապագա սարյաններն ու խաչատրյանները, և վերջապես՝ պետական այն բոլոր մարմիններին, որոնք հարաբերվելով այդ կրթական հաստատություններն ավարտած կամ չավարտած արվեստագետների հետ, խրախուսում են նրանց գործունեությունը՝ ՀՀ-ում և արտասահմանում ցուցահանդեսների, համերգների, ներկայացումների և այլ միջոցառումների կազմակերպման միջոցով: Այս առումով, ներկայումս ստեղծված բավականին անորոշ և անգամ՝ քառսային վիճակի հաղթահարման համար անհրաժեշտ է մշակել ինչպես պետական ու գիտական հաստատությունների կապի և փոխգործակցության մեխանիզմներ, այնպես էլ ձևավորել ճիշտ մշակութային քաղաքականության իրականացման համար պարտադիր՝ հանրային կարծիք: Խիստ կարևոր է մշակույթի ոլորտը տնօրինող պաշտոնեության պարբերական վերատեստավորումը՝ համապատասխան դասընթացներին պարտադիր մասնակցության միջոցով: Իրենց լուծմանն են սպասում նաև մշակութային արժեքների ցուցակագրման, պատճենման ու ողջ աշխարհում առկա եզակի նմուշների՝ ՀՀ տեղափոխման խնդիրները, որոնք անհնար է լուծել առանց մասնագետ-հայագետների օժանդակության:

Սակայն, առավել կարևոր է հարցի սկզբունքային՝ հայեցակարգային հարթությունը, ուր ներկայումս կատարյալ խառնաշփոթ է առաջացել՝ «հայկական մշակութային արժեքներ» և «հայերի կողմից ստեղծված արժեքներ» հասկացությունների մեխանիկական մեկտեղման արդյունքում:

Որպես Մփյուռքի մեր առանձին նշանավոր հայրենակիցների ստեղծագործական ժառանգության ընկալում, երկրորդ հասկացությունը հաճախ մեխանիկորեն ներառնվում է հայկական մշակութային դաշտի մեջ: Այս երևույթն անշուշտ բխում է համաշխարհային մշակույթի մեջ հայերի կատարած ներդրման փաստի հանդեպ բնական և օրինաչափ հետաքրքրությունից. սակայն, նրա հետագա ծավալումը՝ Մփյուռքի սահմանների ու աշխարհագրության ընդարձակմանը զուգընթաց, ի վերջո սպառնում է ստեղծել ազգային արժեքների մասին խիստ տարօրինակ պատկերացումներ, որոնց ներսում կարող է աստիճանաբար ջնջվել բուն հայկական արժեհամակարգի ինքնատիպությունը: Այստեղ ևս հայագիտության մեջ մտնող առանձին գիտությունները լուրջ անելիքներ ունեն և՛ արդեն իսկ ստեղծված արժեքների գնահատման, և՛ ստեղծագործողների նոր՝ ազգային դիմագիծը կորցնող սերնդի հետ աշխատանքների ասպարեզում: Նրանց՝ սեփական ակունքներին մոտեցնելու համար բավական չէ հյուրախաղերի կամ այցելությունների կազմակերպումը, անհրաժեշտ են նաև մշակույթի տվյալ ոլորտում առկա հայկական ավանդույթների խոր ուսումնասիրության համար պարտադիր՝ օտարալեզու գրականություն, ցուցահանդեսներ, ինտերնետային էջեր և այլն, որոնք այսօր համարյա բացակայում են:

Այսպիսով, ներկայումս ազգային արժեքների հիմքը կազմող մշակութային ժառանգության պահպանման ու հարստացման խնդրի լուծման քաղաքական, կազմակերպական, ֆինանսական և այլ կողմերին հավասար և անգամ՝ նրանցից ավելի կարևոր նշանակություն է ձեռք բերում հայագիտության համապատասխան ճյուղերի գործառութային դերակատարությունը

ա. առկա արժեքների պահպանման,

բ. նրանց մասին գիտական գիտելիքների ամբողջացման ու փոխանցման,

գ. նոր արժեքների ձևավորման գործընթացի պետական աջակցության,

դ. ստեղծագործողների նոր սերնդին սեփական ազգի քաղաքակրթական ժառանգության դաշտում պահելու կամ այդ դաշտը ներգրավելու,

ե. օտարամուտ մշակութային արժեքների գերակայությունը բացառելու և նրանք աստիճանաբար «հայացնելու» բնագավառներում:

Այս բոլոր ոլորտներում արդի հայ մշակութաբանների ու արվեստաբանների հետևողական գործունեությունը դադարում է պարզ-մասնագիտական աշխատանք լինելուց և վերածվում է սեփական ինքնության

պահպանմանն ու հարստացմանն ուղղված «հարատև կովի»: Նման կովում հաջողություն արձանագրելու համար, 21-րդ դարի հայոց պետականությունը չի կարող գործել առանց գիտություն-կրթություն-մշակույթ եռանկյունու հետ ուղղակի ու միջնորդավորված կապերի բարդ համակարգի՝ հայագիտական համակարգի:

6. Հայագիտությունն արտաքին ճակատում. պաշտպանությո՞ւն, հարձակո՞ւմ, թե՞ հարձակողական պաշտպանություն

Վերջերս, խոսելով հայագիտության՝ արտաքին աշխարհում ձեռք բերած գործառույթների մասին, մեր գիտնականները, մանավանդ՝ պատմաբաններն ու հայկական մշակույթի տարբեր ոլորտներն ուսումնասիրողները, գերազանցապես նկատի են ունենում հենց այս գործառույթը: Մինչդեռ, ինչպես տեսանք, առանց գիտության, կրթության ու մշակույթի պահպանման ու զարգացման, դժվար է անգամ պատկերացնել, թե ինչպե՞ս և ինչո՞վ ենք մենք պատասխանելու մեր ժառանգության հանդեպ ներկայումս իրականացվող ոտնձգություններին: Ավելին, զլոբալացող աշխարհում փոխվում են այդպիսի ոտնձգությունների կոնկրետ սահմանագծերը և դժվար է ասել՝ օտար ափերում իրականացվող քայլե՞րն են ավելի վտանգավոր, թե՞ մեր ներսում նրանց «բուն դնելու» փորձերը: Եվ ազգային շահերի պաշտպանության համատեքստում հայագիտության համար ազգային արժեքների պահպանման խնդի՞րն է կարևոր, թե՞ նրանց պաշտպանությունը՝ արտաքին ներխուժման (ագրեսիայի) գանազան ձևերից: Այդ պատճառով, հայագիտության երրորդ՝ արժեքների պահպանման ու զարգացման և չորրորդ՝ պաշտպանության ու պայմանականորեն ասած՝ «արտահանման» գործառույթները այնպես են սերտորեն միահյուսվում իրար, որ նրանց սահմանագիծը հստակեցնելու համար հենց սկզբից հարկավոր է ճշտել, որ արտաքին ճակատում հայագիտության ունեցած խնդիրները չեն վերաբերվում գիտության, կրթության ու մշակույթի զարգացման միջոցով սեփական ինքնության ճանաչմանը, ուսուցմանը, պահպանությանն ու զարգացմանը, այլ՝ ներառում են միայն ու միայն մեր պատասխան հակազդեցության (ռեակցիայի) ձևերի ու եղանակների ամբողջությունը՝ արտաքին միջավայրից իրականացվող քաղաքականության հանդեպ:

Հայագիտության ուսումնասիրության օբյեկտների տարանջատումը նրանց հանդեպ օտար «սուբյեկտների» ոտնձգություններին հակազդելու խնդրից, պարտադիր է ու անհրաժեշտ այն պարզ պատճառով, որ առա-

ջինների նկատմամբ մեր վերաբերմունքը չպետք է որևէ փոփոխություն կրի՝ արտաքին միջավայրին հակազդելու ռազմավարական կամ մարտավարական առաջադրանքների կիրարկման պատճառով: Դա կնշանակեր ընդունել մեզ թելադրվող խաղի կանոնները, և «անխոցելի» դառնալու համար՝ ոտք ու գլխով ընկնել ծուղակի մեջ: Արտաքին ճակատին հակազդելու կամ նրա հետ ինչ-ինչ ծրագրեր իրականացնելու խնդիրը տարանջատելով մեր ազգային օրգանիզմի առողջացման առաջադրանքից՝ գիտության, կրթության և մշակույթի սեփական համակարգերի ձևավորման գործում հայագիտության ունեցած լուրջ դերից, մենք կպահպանենք հայագիտության գործառույթները, և միաժամանակ, կապահովենք նրա առանձին գործառույթների «միասնական ճակատի» ձևավորումը արտաքին աշխարհից բխող ոտնձգությունների հանդեպ: Միայն երեքի միավորումը՝ ընդդեմ չորրորդի, կարող է իմաստավորել տվյալ պայքարը, անկախ նրանից, թե որքան հզոր ու բազմադեմ, անգամ՝ հազարադեմ է այդ չորրորդը: Ուրեմն, արտաքին ռազմավարությունների դեմ պայքարի արդյունավետությունն (էֆեկտիվությունն) ուղիղ համեմատական է մեր «ներքին ամրությանը», և՛ ընդհակառակը:

Հաճախ հարց են տալիս՝ ինչո՞ւ օտար հեղինակները կեղծում են մեր պատմությունն ու մշակույթը, իսկ մենք զբաղվում ենք միայն բողոքելու կամ քննադատություններ գրելու գործով: Կարծում ենք, հարկավոր է ըստ էության մոտենալ խնդրին՝ բացահայտելու համար այն իրողությունը, որ օտարների մոտ վերը նշված առաջին երեք ոլորտները՝ գիտությունը, կրթությունն ու մշակույթը վաղուց արդեն սեփական ազգային շահերից բխող համակարգային ընկալման դաշտում են գտնվում, և այդ միասնական «ճակատ» է գրոհում մեր վրա և ո՛չ թե այս կամ այն գիտնականը: Ըստ այդմ՝ տվյալ պետության կամ ազգի քաղաքական ձգտումները կերպավորվում են որպես ո՛չ միայն սեփական պատմության կամ մշակույթի մասին գիտելիքներ, այլև՝ այլոց, այդ թվում նաև՝ հայ ժողովրդի մասին պատկերացումներ: Դրանով նրանցից յուրաքանչյուրը մեզ «տեղադրում» է այնտեղ, որտեղ հարմար է գտնում՝ իր ազգային շահերից ելնելով: Ուրեմն, Հայաստանի ու հայության հանդեպ ինչպես գերտերությունների, այնպես էլ մեր անմիջական հարևանների ծրագրերն ու մտահղացումները վերածվում են պատմության կամ մշակույթի մասին հայեցակարգերի՝ տարածվելով ո՛չ միայն տվյալ երկրում, այլև ողջ աշխարհում: Մեր այն հարևանները, որոնց հետ պահպանվում են ինչ-ինչ տարածքային կամ պատմական խնդիրներ, մշակում են հակա-հայագիտություն և դրանից բխող թշնամական ռազմավարություն

հայագիտության ոլորտում: Նման հակա-հայագիտությունները կամ, հստակորեն, թշնամական ռազմավարություններն ավանդաբար եղել ու մնում են երեքը՝ թուրքականը, ադրբեջանականն ու վրացականը: Առաջին երկուսը, արժեքային առումով ու նպատակներով, գրեթե նույնական են. նրանք ամբողջովին ժխտում են հայ ժողովրդի գոյության իրավունքն իր հայրենի հողի վրա՝ լինեն այդ հողերը ներկա ՀՀ-ի², թե՞ պատմական Հայաստանի տարածքները, որովհետև որևէ սահմաններ ու քաղաքական վարչակարգ ունեցող Հայաստանի գոյությունը անմիջապես հարցականի տակ է դնում նրա տարածքների 9/10-րդի վրա, ցեղասպանության միջոցով պետություններ ձևավորած Թուրքիայի ու Ադրբեջանի՝ ո՛չ միայն պատմական ու քաղաքակրթական, այլև՝ իրավա-քաղաքական օրինականությունը: Ի սկզբանե թշնամական է եղել և այսօր էլ այդպիսին է մնում վրաց հայագիտությունը. բայց, ի տարբերություն թուրք-ադրբեջանականի, նա չի վիճարկում հայ ժողովրդի գոյության իրավունքը իր պատմական և արդի տարածքների գոնե մի մասի վրա: Ուղղակի հայկական այն գրեթե բոլոր հողերը, որոնք ժամանակին մտել են վրաց պետության մեջ, ինչպես նաև նրանց և բուն Վրաստանի տարածքում ստեղծված հայկական մշակութային արժեքները վրաց հայագիտությունը համարում է վրացական: Նշանակում է, որ հայագիտության ոլորտում մենք գործ ունենք բացարձակ թշնամական (թուրք-ադրբեջանական) և հարաբերականորեն թշնամական (վրացական) ռազմավարությունների հետ:

Հայագիտության հանդեպ կիրառվող օտար ռազմավարությունների *երկրորդ*, պայմանականորեն ասած՝ եվրասիական խումբը ձևավորում են այն պետություններն ու ազգերը, որոնք դարեր շարունակ պատմականորեն անմիջական տարածքային շփումների, հարաբերությունների ու փոխգործակցության մեջ են եղել Հայաստանի ու հայության հետ, ուստի, որպես քաղաքակրթական գրավչության դաշտեր, ազդել են մեր վրա և ընդհակառակը՝ կրել մեր որոշակի ազդեցությունը: Հետաքրքրական է, որ ներկայումս մեր բոլոր հին հարևաններն ու գործընկերները, չնայած պատմական տարբեր դարաշրջաններում եղած քաղաքական կնճիռների ու հիմնահարցերի առատությանը, կազմում են բարեկամական ռազմավարությունների դաշտը (ռուսական, իրանական, արաբական, հունական և այլն): Այս հանգամանքը վկայում է, որ որպես պատմություն ու մշակույթ, Հայաստանը հանդիսանում է ամենակոնտակտային արժեհամակարգի կրողը քրիստոնեական ու իսլամական քաղաքակրթությունների սահմանագծին, որը, ներկայումս, եկվոր ցեղերի ու

նրանց ձևավորած Թուրքիա ու Ադրբեջան պետությունների «հայա-գետների» միջոցով «դուրս է դրվում» սեփական դաշտից՝ նրա խիստ հարմար տեղը գրավելու համար:

Հայագիտության հանդեպ կիրառվող արժեքային առումով նույնպես բարեկամական ռազմավարությունների *էրրորդ*՝ ռոմանո-գերմանական խումբը ծագում է առնում մայրցամաքային Եվրոպայից, մանավանդ նրա հնագույն՝ ռոմանական հատվածից (Ֆրանսիա, Իտալիա և այլն), որը դեռևս անտիկ շրջանից ու միջնադարից քաղաքական և մշակութային սերտ շփումների մեջ է եղել Հայաստանի ու հայության հետ:

Հայագիտության ոլորտում ներկայումս գործող *չորրորդ*՝ գլոբալ առումով՝ ամենահզոր ռազմավարությունը դա անգլոսաքսոնականն է՝ իր հստակորեն ամերիկյան կերպարանքով: Այն չի կարելի անվանել ոչ՝ բարեկամական և ոչ էլ թշնամական: Դա սխալ է ոչ միայն մարտավարական առումով՝ կոիլովյան Մոսկայի վիճակում չհայտնվելու նկատառումով, այլև հարցի բուն էությանը, որովհետև տվյալ ռազմավարությունը արժեքայնորեն թշնամական է իրեն չպատկանող կամ իրեն չենթարկվող մնացած ողջ աշխարհի, այդ թվում և մեր հանդեպ թշնամաբար տրամադրված՝ երկրների նկատմամբ: Ուղղակի, ամերիկյան հայագիտության համար հայկական ինքնատիպ քաղաքակրթության հարուստ ներուժի ազգապահպան հզոր շերտն ավելի ամուր «ընկույզ» է, քան թուրքական կամ ադրբեջանական դեռևս խակ ու չկարծրացած մշակույթների հեղհեղուկությունը:

Եվ, վերջապես, հայագիտության ոլորտում գործում է մի *հինգերորդ*՝ հաճախ անտեսանելի, հաճախ էլ՝ հիմնականում ամերիկյան, բայց երբեմն նաև եվրոպական, թուրքական, ադրբեջանական և անգամ՝ ռուսական ռազմավարությունների մեջ թափանցող և նրանց սեփական նպատակներին ծառայեցնող՝ հրեական ռազմավարությունը, որը ամենաբազմազուլին է և որպես այդպիսին՝ ամենաբարդը: Այս ռազմավարությունը ևս կառուցված է գլոբալ մտածողության սկզբունքներով՝ «մենք և մնացած աշխարհը» բանաձևի հիման վրա, բայց միաժամանակ՝ ունի նաև տարածաշրջանային ենթահող՝ ի դեմս Իսրայել պետության:

Հարց է առաջանում՝ ինչքանով է զարմանալի այն փաստը, որ նման օտար ռազմավարություններից յուրաքանչյուրը ստեղծում է Հայաստանի իր կերպարը կամ՝ ընդհանրապես ջնջում է այն (թուրք-ադրբեջանականի պարագայում): Պատասխանը միանշանակ է՝ այդպես էլ պետք է լինի: Սակայն, ամբողջ խնդիրն այն է, որ գլոբալացող աշխարհում, - ուր տեղեկատվությունը վերածվում է զենքի, - նման «կերպարների» մրցա-

վեճը տեղափոխվում է համաշխարհային բեմահարթակ՝ որպես ազգ-արժեքների պայքարի դրսևորումներից մեկը: Ուրեմն, տանուլ տալ այդ ոլորտում՝ նշանակում է հակառակորդներին զիջել ազգային շահերի պաշտպանության ողջ ուղղահայաց-արժեքային մրցադաշտը, այսինքն՝ վերածվել պատմության օբյեկտի: Սակայն, միաժամանակ, ակնհայտ է նաև, որ հնարավոր չէ կանխել Հայաստանի զանազան «կերպարների» ձևավորումը օտար հայագիտական դպրոցների կողմից, որովհետև դրանցից յուրաքանչյուրի թիկունքում «կանգնած են» տվյալ ազգի ու պետության շահերը: Այդ պատճառով, անխուսափելի է դառնում հայագիտության կողմից սեփական ռազմավարության ու մարտավարության հիմնումը ոչ թե պարզունակ հակազդման կամ պատկերավոր ասած՝ ողջ աշխարհին «պատերազմ հայտարարելու», այլ՝ հակազդման ու փոխգործակցության ուղղակի և միջնորդավորված ձևերի լայն կիրառման՝ ռազմավարական ու մարտավարական դաշինքների վրա:

Կարծում ենք, որ փոքր ազգի ու պետության համար նման հնարավորությունը գտնվում է ռազմավարական ընդհանուր խնդիրների վրա հիմնված համագործակցության գուգահեռ դաշտերի ձևավորման մեջ, որոնցից յուրաքանչյուրում կարելի է «տեղավորել» սեփական ճշմարտությունը՝ ստեղծելով Հայաստանի այնպիսի ընկալում, որը հարմարվում է տվյալ դաշտին և, միաժամանակ, առանձին «դաշտերի» միակողմանիության համադրումով՝ փակել թշնամական ռազմավարությունների ճանապարհը ու չեզոքացնել նրանց նպատակը՝ Հայաստանի ժխտումը որպես պատմություն և մշակույթ: Նման հնարավորություններ կան և՛ եվրասիական, և ռոմանո-գերմանական ռազմավարությունների հետ համագործակցության դաշտում: Դրանով հնարավոր է.

ա. տեղավորվել միասնական՝ հույն-ուղղափառ-սլավոնական, այսինքն՝ արևելաքրիստոնեական քաղաքակրթական տարածության մեջ,

բ. հին Արևելքի մշակութային ժառանգության հիմքի վրա՝ նրա բնիկ ժողովուրդների քաղաքակրթական ընդհանրությունների ուսումնասիրության՝ հայ-իրանական և հայ-արաբական դաշտում,

գ. Հայաստանի, որպես քրիստոնեական Եվրոպայի արևելյան պատվարի ընկալման վրա հիմնված՝ մայրցամաքային Եվրոպայի ռոմանական և գերմանական երկրների գիտական շրջանակների ընկալումների դաշտում:

Սրանցից յուրաքանչյուրը ներկայացնող հայագետները ստեղծել են Հայաստանի իրենց կերպարը, որոնց ողջ գումարը «ծածկում» է մեր պատմության ու մշակույթի թուրք-ադրբեջանական կեղծարարների ողջ

գործելադաշտը, քանի որ Հայաստանը ընկալվում է որպես բնիկ, արիական, արևելաքրիստոնեական և միաժամանակ՝ եվրոպական քաղաքակրթության պատվար երկիր, այսինքն՝ այն բոլոր հիմնական քաղաքակրթական ավանդույթների հանրագումար, որոնք ստեղծվել են մեր տարածաշրջանում: Այսպիսով, եվրասիական մայրցամաքի ուժի հիմնական կենտրոններում (բացի թյուրքական և որոշ մահմեդական ժողովուրդներից ու երկրներից), մեր տեսակետների հիմնավորման առումով գոյություն ունեն ավելի քան հրաշալի հնարավորություններ:

Ավելի բարդ ու ծանր խնդիր է ամերիկյան հայագետների բավականին հարձակողական (ագրեսիվ) ու առարկություն չճանաչող մոտեցումներին հակազդելու և նրանց ներսում մեր տեսակետները տարածելու գործը: Իհարկե, նրանց շարքերում ևս կան տարբեր մոտեցումներ, որոնց կողմնակիցների մի մասի հետ կարելի է համագործակցել, բայց, ընդհանուր առմամբ, ամերիկյան հայագիտությունը, այդ թվում և նրա հայագի ներկայացուցիչների նշանակալի մասը, ներկայումս ուսուցչի, թելադրողի, պարտադրողի կեցվածքի մեջ է՝ և՛ հայ, և՛ թուրք, և՛ ադրբեջանցի գիտնականների հանդեպ: Դա բխում է Մեծ Մերձավոր Արևելքի ձևավորման ԱՄՆ ծրագրին սպասարկելու նպատակադրումից: Այդ պատճառով, ամերիկյան հայագիտության հանդեպ մեր կեցվածքները պետք է կրեն հստակորեն պաշտպանական բնույթ՝ թույլ չտալու համար նրա հայեցակարգերի պարտադրանքը, և, միաժամանակ, ուղղելու համար հնարավոր հարվածի սլաքները՝ արգելքների, խոչընդոտների ու բացահայտ «տաբուների» այն դաշտի դեմ, որն ստեղծվել է ժամանակակից Թուրքիայում՝ Հայաստանի ու հայերի շուրջ: Հիմնական գծերով նույն մոտեցումն է անհրաժեշտ որդեգրել նաև հրեական հայագիտության՝ իսրայելցի և ամերիկաբնակ ներկայացուցիչների հանդեպ՝ անհրաժեշտ համարելով թուրք-ամերիկյան և թուրք-հրեական հակասությունների օգտագործումը՝ չբացառելով հրեա գիտնականների հետ համատեղ աշխատանքը, մանավանդ՝ ցեղասպանությունների պատմության ուսումնասիրության բնագավառում:

Իսկ ինչ վերաբերում է հայագիտության ասպարեզում ներկայիս Թուրքիայի կողմից պետական մոտեցումներ որդեգրելու, զանազան «կոմիտեներ» ձևավորելու փորձերին, դժվար չէ նկատել, որ դրանց հիմքում առկա է խոր անհանգստությունը ո՛չ թե միջազգային ասպարեզում, այլ հենց սեփական երկրի ներսում Քեմալ Աթաթյուրքի ժամանակներից հաստատված «տաբու»-ների ճգնաժամի հանդեպ: Եվրամիությունն մուտք գործելու համար ձեռնարկվող դեռևս սաղմնային բնույթի բարե-

փոխումները տանում են դեպի «թուրքական պերեստրոյկայի» սկզբնավորում՝ ազգային հարցում, որի գոյության հերքումը քեմալիզմի հիմքն է: Դա անխուսափելի է դարձնում ներկայումս արդեն նկատվող այլախոհության տարածումը թուրք մտավորականության շրջանում: Մա նշանակում է, որ մեր պատկերացումները թուրքական «ազգայնական մոնոլիտի» մասին չափազանցված են, ուստի հարկավոր է մտածել նաև այդ դաշտում աշխատելու մասին, քանի որ արդեն իրար հետևից հայտնվում են թուրք սախարովներ հիշեցնող Թաներ Աքչամներն ու նրա նմանները: Ուրեմն, խնդիրը ճշմարտության վրա հիմնված մեր գիտական հայեցակարգի պահպանումն է ու «հարձակողական պաշտպանության» ռազմավարության որդեգրումը:

Մա նշանակում է.

ա. հնարավորինս ընդլայնել փոխգործակցությունը հայազիտության ասպարեզում առկա արևմտավրոպական ու «եվրասիական» ռազմավարությունների հետ՝ սեփական հայեցակարգերը «տեղավորելով» այդ ռազմավարություններից բխող պատկերացումների շրջագծում,

բ. հնարավորինս սահմանափակել ամերիկյան հայազիտության դաշտից բխող՝ աշխարհաքաղաքական նպատակներ հետապնդող հարցադրումների ու հայեցակարգերի թափանցման տարբերակները՝ մեր ճանաչողության, կրթության և մշակույթի ոլորտ,

գ. հնարավոր ամեն ինչ անել, որպեսզի ամերիկացի, հրեա ու եվրոպացի գիտնականների ուսումնասիրությունները՝ թափանցելով Թուրքիայի և այլ թշնամական ռազմավարությունների կողմը հանդիսացող երկրների գիտական շրջանակների ու լայն հասարակայնության մեջ, քայքայեն՝ Հայաստանի և հայության մասին «տաքուների» ողջ համակարգը:

Այս երեք դաշտերում կիրարկվող՝ հարձակողական, պաշտպանական և հարվածը հակառակորդի վրա ուղղելու մարտավարությունները դիտարկել որպես միասնական՝ «հարձակողական պաշտպանության» բաղադրատարրեր, որի համամասնությունները կարող են անընդհատ ճշգրտումների ենթարկվել, սակայն էությունը՝ սեփական արժեհամակարգի ձգողականության մեծացումը, այն քայքայելու փորձերի խափանումը և հակառակորդին՝ համաշխարհայնացման միտումներից բխող անխուսափելի վերարժևորումների թիրախ դարձնելը, պետք է մնա անփոփոխ:

Նման ռազմավարության պլանավորման ու իրականացման պարտադիր պայմաններն են.

ա. գիտության, կրթության, մշակույթի և արտաքին քարոզչության խնդիրները համակարգող, անհրաժեշտ տեղեկատվություն ստացող և կառավարությանը առաջարկներ ներկայացնող քաղաքական պլանավորման օղակի ձևավորումը, որը հստակորեն կսահմանի հայագիտական համակարգի քայլերի ուղղվածությունը և հաջորդականությունը երեք՝ ներքին և երեք՝ արտաքին գործելադաշտերում,

բ. առանց նման կենտրոնի կամ օղակի, հայագիտությունը չի կարող իր ճանաչողական, դիդակտիկ-ուսուցողական, արժեքների պահպանման և արտաքին գործառույթները դիտարկելով որպես մեկ ամբողջություն, ներկա գլոբալացող աշխարհում իրականացնել ազգային շահերի պաշտպանության գործը, քանի որ, լավագույն դեպքում, գիտնականները կգրադվեն հակառակորդի ոտնձգություններին պատասխանելով, կրթությունը՝ մեր ավանդական արժեհամակարգը հին իներցիայով մատաղ սերնդին ներկայացնելով, մշակույթը՝ ավանդույթի և մշակույթի զարգացման նոր միտումների միջև քառսային շարժումներով, իսկ արտաքին աշխարհում տեղի ունեցող գործընթացների մասին տեղեկատվությունը լավագույն դեպքում կկուտակվի արտգործնախարարության արխիվներում՝ չվերածվելով դրանց իմաստավորումից բխող հստակ (կոնկրետ) գիտական, կրթական կամ մշակութային նախաձեռնությունների:

Նման փաստարկների երկար շարանը կարելի է շարունակել՝ մինչև անվերջություն, եթե չարձանագրենք այն հիմնական օրինաչափությունը, որը բխում է մեր ընդարձակ վերլուծությունից և դրա հիման վրա՝ չհստակեցնենք հայագիտական համակարգի գործունեության որոշակի մեխանիզմները: Այն է՝ գլոբալացող աշխարհում և նրա մի մասնիկը դարձող Հայաստանում, հայագիտության նպատակները վերածվելով գործառույթների, ներկայումս դարձել են մեր այն գիտակցված պահանջ-մունքները, որոնք առանձին-առանձին ծառայում են ո՛չ թե կոնկրետ ոլորտների և դրանց ամբողջացման միջոցով՝ ողջ ազգի, այլ առանձին ոլորտներում առկա մարդկանց ու նրանց խմբերի պահանջմունքների բավարարմանը: Դրանով խախտվել է այդ ոլորտների և՛ միջոց, և՛ նպատակ լինելու փաստը: Այժմ նրանք միջոցներ են՝ միայն իրենց համար, բայց պետության ու ազգի համար նպատակ կարող են դառնալ, եթե ո՛չ միայն դիտարկվեն, այսինքն՝ գիտակցվեն, այլև օգտագործվեն՝ այսինքն՝ գործարկվեն որպես ամբողջացող աշխարհում նույնպես ամբողջացող հայկական գործոնի գործառութային դերակատարության փոխկապակցված բաղադրիչներ: Ազգային շահերը՝ պետության գիտակցված պա-

հանջմունքները, որպես կոնկրետ նպատակներ և արժեքներ, գիտակցության ոլորտից կեցության ոլորտ և հակառակը տեղափոխելու մեխանիզմների միջոցով ձևավորվող՝ *հայագիտական համակարգը* կդառնա քաղաքական, տնտեսական և այլ համակարգերի բաղկացուցիչը՝ վերածվելով պետության կայացած լինելու վկայություններից մեկի: Նա կարտադրի հայագիտական


1. գիտելիքներ՝ իր համար,
2. գիտելիքներ՝ հասարակության համար,
3. հայագիտական գիտելիքներով զինված հաջորդական սերունդներ,
4. կդառնա հայկականության արժեհամակարգի կրողն ու պահպանողը հանդիսացող մշակույթի զարգացման խթանը,
5. կպաշտպանի, և, միաժամանակ, կտարածի այդ արժեհամակարգը արտաքին աշխարհում:

Այս բոլոր խնդիրների լուծումը հնարավոր է հայագիտական համակարգի աշխատանքների պլանավորման եռանկյունաձև և աշխատանքների կառավարման՝ ճյուղավորված ցանցի ձևավորման միջոցով: Առաջինը կիրականացնի

- ա. գիտական պլանավորման,
- բ. քաղաքական պլանավորման,
- գ. քաղաքական որոշումների կայացման գործառնություններ:

Հենց այդ որոշումները կվերածվեն կառավարման գործառնությունների՝ հայագիտական համակարգի առանձին բնագավառների համար: Ընդ որում՝ գիտության պլանավորմամբ զբաղվող օղակը կունենա նաև գիտական գործունեության կառավարման, բայց ոչ՝ նրա նյութատեխնիկական ապահովման գործառնություն, իսկ քաղաքական պլանավորման օղակը՝ արտաքին քարոզչության ու հակաքարոզչության համակարգման գործառնություն՝ ամենևին էլ չփոխարինելով արտաքին քաղաքականությունը տնօրինող մարմինն, այլ՝ գործելով նրա միջոցով:

Ինչ է տալիս նման համակարգի ձևավորումը (տե՛ս սխեմա 1) և ինչպե՞ս պետք է այն գործի: *Առաջին*, գիտական պլանավորման ու միաժամանակ՝ գիտական գործունեության կառավարման օղակը լիովին ինքնավար (ավտոնոմ) է՝ գիտա-ճանաչողական գործառնության իրականացման գործընթացում, սակայն նա չի կարող ինքնաբավ լինել՝ այդ գործընթացի նյութատեխնիկական ապահովման հարցում, որը կհանգեցնի յուրահատուկ «տնտեսվարող սուբյեկտ» դառնալուն և իր գիտական գործը թողնելով՝ կառավարության գործառնություններն իրականացնելուն: Դա հղի է նաև այդ օղակի ազգային շահերի դաշտից դուրս գալու և այլ պատվեր-



Միտնա 1. Հայագիտական համակարգ

ների դաշտ տեղափոխվելու վտանգով, որը բացառվում է՝ գիտական գործունեության կառավարումը նրա նյութատեխնիական ապահովումից տարանջատելու պարագայում: *Երկրորդ*՝ քաղաքական պլանավորման օղակը, լինելով ողջ հումանիտար ոլորտում կառավարության քաղաքականության իրականացման «ուղեղային կենտրոնը» և ունենալով անհրաժեշտ տեղեկատվություն, միաժամանակ նաև՝ կստանա արտաքին քարոզչության ու հակաքարոզչության դաշտում իր մտահղացումներն արտգործնախարարության միջոցով, ինչպես նաև ուղղակիորեն իրականացնելու հնարավորություն: Միաժամանակ, նա կրթության, գիտության կամ մշակույթի ոլորտում ծրագրերի ու քայլերի նորանոր առաջարկներով է ապահովելու՝ քաղաքական որոշումներ կայացնող և կառավարման գործառույթներ իրականացնող մարմինն, այսինքն՝ կառավարությանը: Վերջինս կազատվի ամեն ինչով զբաղվելու, այսինքն՝ նեղ մասնագիտական խնդիրների, հայագիտության ոլորտում առկա մարտահրավերները դիմագրավելու դեղատոմսերի մշակման, քարոզչության ու հակաքարոզչության ծավալման և վերջապես՝ ներքին ու արտաքին գործելադաշտերի փոփոխության հեռանկարները վերլուծելու և ըստ այդմ՝ հայագիտության ռազմավարության տարբեր կողմերը պլանավորելու գործից: Միաժամանակ, գիտական ու քաղաքական պլանավորման օղակների միջև կընթանա տեղեկատվության փոխանակում և

փոխադարձ առաջարկների ներկայացում, որոնք անհրաժեշտ դեպքերում կդառնան խորհրդատվություններ՝ գիտության կամ արտաքին քարոզչության ու հակաքարոզչության համար: Եթե նման խորհրդատվությունները չվերաժվեն անմիջականորեն տվյալ օղակի կողմից կայացվող որոշումների, ապա կարող են կառավարության միջոցով վերաժվել քաղաքական որոշումների:

Նման համակարգը կապահովի հայագիտության վերը նշված բոլոր գործառնությունների իրականացումը՝ բացարձակապես չվնասելով ո՛չ գիտության ու գիտնականի՝ իր ոլորտում ունեցած ազատությանն ու ինքնուրույնությանը և ո՛չ էլ կրթության կամ մշակույթի զարգացման առանձնահատուկ (սպեցիֆիկ) պայմաններին: Նրա շրջագծում հնարավոր կլինի նաև գիտական ճշմարտության որոնման և կիրառման օպտիմալ ոլորտների ընտրության խնդիրը՝ այն ծառայեցնելով ազգային շահերին:

Օրինակ, գիտնականն ուսումնասիրելով մեր ժողովրդի հոգեբանությունը, կարող է հայտնագործել այնպիսի գծեր, որոնք խոցելի են դարձնում մեզ արտաքին աշխարհում: Տվյալ համակարգը իմաստավորելով այդ գիտական հայտնագործության արդյունքները, ո՛չ թե ողջ աշխարհին «ավետում է» այդ մասին, այլ՝ կառավարությանն է ներկայացնում կրթության ոլորտում որոշակի ծրագրերի մշակման պատվեր՝ ապահովելով նրա և՛ գիտական, և՛ ուսուցողական կողմի իրականացումը՝ պայմանականորեն ասած՝ «հիվանդության» բուժումը: Իսկ քաղաքական պլանավորման օղակը, ընդհակառակը, մշակում և իրականացնում է հայ ժողովրդի շուրջ նման կերպարի (իմիջի) ձևավորման հնարավորությունները բացառող՝ դրական պատկերի ստեղծմանն ուղղված քայլեր: Ստացվում է, որ մենք մեր ներսում հաղթահարում ենք մեր թերությունները, արտաքին աշխարհին մատուցելով՝ առավելությունները: Նույնը՝ կրթական ծրագրերի պարագայում, մշակույթի մեջ, արտաքին ռազմավարություններին դիմագրավելու հարցում, երբ անընդհատ ծառանում է միևնույն հարցը՝ սեփականը պաշտպանելու և, միաժամանակ, արտաքին աշխարհին հնարավորինս բացվելու խնդիրներին զուգահեռ լուծումներ գտնելու անհրաժեշտությունը:

Աղբյուրներ և գրականություն

1. Հովհաննիսյան Դ., Համաշխարհային գործընթացները և տարածաշրջան՝ գոյատևման պայքար, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, Երևան, 2003թ., N 2, էջ 4:

29 մարտի, 2004թ.

АРМЕНОВЕДЕНИЕ В 21-ОМ ВЕКЕ. ФУНКЦИИ АРМЕНОВЕДЕНИЯ В КОНТЕКСТЕ ЗАЩИТЫ НАЦИОНАЛЬНЫХ ИНТЕРЕСОВ (часть вторая)

Геворк Худинян

Резюме

В новой конкурентной среде традиционные цели арменоведения преобретают определенные идейно-политические функции. Выполнение основной, - научно-познавательной функции арменоведения создает прочную основу для использования фундаментальных знаний в такой области как образование, которое является важнейшим средством сохранения национальной идентичности. Арменоведение выполняет важную идейно-политическую функцию в деле сохранения специфических особенностей и дальнейшего развития национальной культуры. Арменоведение способствует также делу распространения и защиты национальных ценностей на международной арене, где сегодня уже вырисовываются различные группы стратегических подходов в отношении исторического и культурного наследия армянского народа. Оптимальным методом выполнения функции защиты и распространения армянского историко-культурного наследия в мировой научной среде и тесно связанных с ним политических кругах, является тактика “наступательной обороны”. Она подразумевает широкое внедрение результатов познания истории, языка и культуры своего народа в научную среду дружественно настроенных стран, с одновременной защитой своих национальных ценностей.